

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅԸ ԵՎ ԱՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԸ

Ա. Գ. ԱՓԻՆՅԱՆ

Պատահակա՞ն ծանոթություն

Գրականության պատմությունը անհատականությունների պատմություն է նախ և առաջ: Նրանց հարաբերություններից, անձնական շփման դրվագներից է հյուսվում այն, ինչ մենք ընդունում ենք «սահուն» պատմության տեղ, երբեմն էլ այնքան տարվում դրանով, որ արդեն քիչ ենք հետևում նրանց՝ այդ պատմության հեղինակներին: Մինչդեռ գրական էինդանի շարժումը միշտ շատ ավելին է, քան մեզ ծանոթ դասակարգային ու գրքային պատկերացումը՝ կերպարներ, կենսագրություններ և այլն: Ահա թե ինչու մլանդական բնութագրումներն այլևս քիչ են կամ էլ սյարգապես չեն բավարարում, մենք որոնում ենք մեր անցյալի աջն ու ահյակը, յուսան ու ստվերը, և վերջապես անտեսել չենք կարող այն փաստերը, որ չեն տեղավորվել այս կամ այն պատճառով ավանդական սխեմաների մեջ: Մեծ անհատականությունների կյանքը առօրեական-սովորական բան չէ, և ոչ էլ սովորական էին այն խաչմերուկները, որտեղ նրանց ուղիները հատվել են: Սա գրականության ու գրական կյանքի այն կողմն է, որ մինչև այժմ ամենից թի՛ է ուսումնասիրվել, քիչ է արժանացել ուշադրության և ըստ էության նաև «արտոնված» քիչ է եղել: Մինչդեռ անսովոր էին դրանք՝ այդ հանդիպումները, որ շարունակվեցին նաև իրենց ժամանակից դուրս ու այդպես էլ մնացին խնդիր ու շարք՝ բոլոր սերունդների համար:

Չարենցն ու Չորյանը գրականություն մտան միաժամանակ՝ 10-ական թվականներին, Չարենցի մուտքի տարին 1914-ը՝ եղավ, Չորյանն իր առաջին գիրքը տպագրեց շուրս տարի անց: 1918 թ. նրանք ծանոթացան, և հիշելով, թե ինչպես աշնանային մի օր «Մշակի» խմբագրատուն մտավ կարճահասակ ու վտիտ մի տղա՝ հնամաշ մուշտակով («որոնց դարաբաղցիք ասում են «պրիթրտուս», այսինքն՝ բուրդը դուրս», Ստ. Չորյան, Ծր. ժող. 12 հատ., հ. 11, էջ 308), Չորյանն իր հուշերում այդ հանդիպումն անվանեց «պատահական ծանոթություն»: Այս խոսքերի մեջ անսովոր բան դժվար է տեսնել, մանավանդ, եթե հիշենք, որ բուռն ոգևորությունը երբեք հատուկ չի եղել Չորյանին և Ծվ դրա համար առանձնապես հիմք էլ չկար, քանի որ, ինչպես ինքն է գրում՝ «մենք ճանաչեցինք իրար, բայց չմտերմացանք այնքան, որ հանդիպեինք և գրուցեինք» (էջ 310): Իրականում նրանք գիտեին միմյանց մինչև այդ «ծանոթությունը»: Չորյանը ծանոթ էր «Դանթեական առասպելին», իսկ Չարենցն էլ «կարծես պարտքի տակ շմնալու համար» գովեց «Հանես» պատմվածքը: Փոխադարձ զնահատականները, ճիշտ է, միշտ վերապահումներով, շարունակվում են նաև հետագայում (այդպես Չորյանը զնահատեց «Ամբոխները խելագարված» պոեմը):

Իրենց հերթին, «փոխադարձ վերապահումները» արդյունք էին խառնվածք-

ների ընդգծված տարբերության, թեպետ նրանց ճանապարհին վարելի է նաև ընդհանուր շատ բան տեսնել: Այսպես, նրանց առաջին գնահատողը նույն քննադատը՝ Նիկոլ Աղբալյանը եղավ, որն ազդարարեց մեծ բանաստեղծի ծնունդը, իսկ Զորյանի առաջին գրքին («Տխուր մարդիկ») կցեց մի առաջաբան, որին վիճակված էր շատ բան կանխորոշելու գորյանագիտության՝ մեջ: Նրանք սկսեցին իրրև մշուշի ու տեսիլքի երգիչներ: մեկն իր արձակ, մյուսը շափածո տողերում հյուսելով «տխրության» երգը: Եվ էլի նման բաներ: Բայց այսօր նրանց «մտերմութունը» լուռ բանավեճի է նման, և դա դժվար չէ հասկանալ, քանի որ հավասարակշռված Զորյանի առջև... Զարենցն էր, որ «ծխում էր այն ամենը, ինչ սիրում էր», ազատվել էր ձգտում այն ամենից, ինչով և ինչպես սկսել էր, հրապարակով վարկաբեկում էր այն, ինչ պաշտում էր մի ժամանակ, հենց սկզբից ահաբեկում էր «հինը ժխտող հայացքներով» և ուներ մի «տխուր հակում»... խմում էր: Իր նոր «ժանտության» մեջ Զարենցն անդիզում ու պարտադրող էր՝ Զորյանը հիշում է նրա իսկական հետապնդումը «Ռոմանս անսերի» մասին կարծիք իմանալու համար, որից հետո տաքարյուն բանաստեղծն առանց երկար-քարակ մտածելու ասաց՝ «դու՛ մանր-բուրժուական արվեստի կողմնակից ես» (էջ 320): Այս ամենին վարելի էր վարժվել, առավել ես Զորյանի համար, որ արդեն ճանաչում ու շատ բաներում էր շուտ «նեղացող ու տաքացող», ուրիշներին նման դեպքերում պարզապես «ետ ես մնացել, նորը չես հասկանում» շարտող Զարենցին:

Հետաքրքիր պատմության կնամանվեր սա, եթե շիներ ողբերգական: Զարենցի միշտ զվարթ պահվածքը թաքցնում էր ներքին դրաման նրա մեծ հոգու, որ միշտ փոխվում էր, որն իրոք անկանխատեսելի էր, հաճախ՝ անընդունելի, անհասկանալի՝ շատերի համար: «... Այսօրվա հավանածն ու սիրածը կարող էր մերժել մի երկու ամիս հետո, և ընդհակառակը, — հիշում էր Զորյանը: — Բայրոնին մի օր համարում էր հոյակապ, մյուս օրը շատախոս, ձանձրալի, Գյոթեին՝ մերթ խորն ով գրավիչ, մերթ սառն ու դատողական: Սկզբում Պուշկինին համարում էր հնացած, իր դարի հետ անցած, բայց հետո սկսեց գրել նրա ձևով, փառաբանելով նրա պարզութունն ու արվեստը, էլ չեմ հիշատակում Տերյանին, որին և՛ սիրում էր, և մերժում... և մինչև կյանքի վերջը գտնում էր, որ նրանից լավ արեան չունենք, ու սիրով անգիր արտասանում էր նրա բոլոր բանաստեղծությունները» (էջ 325):

Իր ժամանակի մեծ երգիչը իր օրերին բոլոր նյարդերով կապված բանաստեղծը ինչ-որ իմաստով նաև հայտնվել էր ժամանակից դուրս... Իր ժամանակի իսկական գինվորն էր, բայց հարկ եղավ կովելի նախ և առաջ ժամանակի դեմ: Իր երազած գալիքն ուղղվելու էր իր դեմ, իր երգը մահաբեր պիտի դառնար, փոթորիկը, որի պոետն էր, «շատերի կամքով» պիտի վերածվեր մահաշունչ խաղի: Եվ ստացվեց այնպես, որ Զարենցի ժամանակը Զարենցի համար չէր, դա հաստատ կործանում էր, որ կարելի էր կանխազգալ, ինչ և արել է բանաստեղծն ամենատարբեր առիթներով: Իր «անհանգիստ» խառնվածքով նրան վիճակված էր լինելու մեր պատմության ամենից արյունոտ օրերի վկան ու գոհը, և դա ամենից լավ գիտեր ինքը՝ բանաստեղծը, գիտեր և հենց դա ընտրեց իրրև ճակատագիր:

Ահա թե ինչու նրանց՝ Զարենցի և Զորյանի ժանտությունը բնավ էլ «պատահական» չէր, ընդհակառակն՝ բնորոշ էր կասկածի ու արյան մոռյլ ժամանակին. մեկը՝ հողմերի դեմ մերկ բանաստեղծ, մյուսը՝ ապագա ողբերգության շափերը պարզ տեսնող գգուշավոր տարեգիր... Զորյանը երբեմն չէր ներում Զարենցի սալթաբումները, բայց չներելով հանդերձ՝ հասկանում էր: Նա գնահատում էր իր հանճարեղ ու խենթ բարեկամին, բայց նրան չէր դիմանում, որովհետև նրա արագ հեքը իր հեքը չէր, նրա տարբերքի, կյանքի, սի-

րո հետ չէր համընկնում) ու չհամընկավ իրենը, իր ունեցածը: Չարենցն ուրիշ բարեկամներ էլ ուներ, և նրանց մեջ քիչ չէին փառքի փշրանք մուրացողները՝ Չարենցը գիտեր ճամփա գնալ և նրանց հետ: Զորյանի բարեկամությունն այլ էր. դա հաշվենկատ համակրանք չէր, բայց պահանջկոտ էր ամեն բայլի հանդեպ: Ահա թե ինչու էր Չարենցը դժգոհում իր «չեզոք» բարեկամից: Զորյանից նա պահանջում էր այն, ինչ հատուկ էր իրեն, սրտնեղում էր, երբ նա չէր մասնակցում բացված բանավեճերին: Իսկ Զորյանը դա չէր անում, որովհետև գիտեր՝ ինչով են դրանք վերջանալու: Նա ձգտում էր ետ պահել իր բանաստեղծ բարեկամին վտանգավոր աղմուկից, բայց ստանում էր պատասխան՝ «Ուրեմն դու էլ իմ թշնամիներից ես»: Այս ամենը և այսպես երկար չէր կարող շարունակվել՝ «սառան մեր հարաբերությունները, բայց մինչև վերջը մնացին միշտ կոռեկտ», — հիշում է Զորյանը:

«Մաղր... ինճն իր դեմ»

1934-ի մարտից Չարենցն օրագրում գրառումներ է կատարել, այսպես կրեք տարի, մինչև 1937-ը: Կարծես բանաստեղծն ինքն էր որոշել ինքնակամ հեռանալ: ոչ մի բանի այլևս շմասնակցել, ահա թե ինչու այդ գրառումներում՝ գրված հստակ ձեռագրով, կյանքից հեռացողի ակնհայտ մտադրությամբ, ամեն ինչի մասին խորհում էր փիլիսոփայաբար: գրում էր մահվան, Տերյանի ձեռագրի, Մկրտիչ Արմենի, Ա. Մյասնիկյանի, «մարդկություն» կոչվող կուլեկտիվի, «տրագեդիա» հասկացության, գրողի մասնագիտության, «մարքսիստ քննադատների», իր քառասնամյակի և... Զորյանի մասին: Եթե Չարենցի այդ օրագիրը համակողմանի քննության չի արժանացել, ապա Զորյանին վերաբերող նրա խոսքերը պարզապես շրջանցվել են: Եվ դա հասկանալի է՝ օրագրային այդ գրառումը (14 մարտի, 1934 թ.) անհնար էր որևէ կերպ օգտագործել, քանի որ այն պարզապես ուղղված էր ... Զորյանի դեմ: Գրառումն սկսվում է նրանով, որ Մ. Արմենին Չարենցն անվանում է «մեր նորագույն գրականության ամենաինքնուրույն» դեմքը, հիշում է նրա առաջին գրվածքը, իր տպավորությունը՝ «ոչ մի գրող իր առաջին քայլերից այդքան ինքնուրույն չի եղել, որքան Արմենը: Եվ... բնորոշ է մեր իրականության համար. նրան ոչ միայն այն ժամանակ չնկատեցին, իբրև արտաոց մի ուժ, մի երեվույթ, — այլ մինչև հիմա էլ չեն նկատում...»: Գրառումների Արմենին վերաբերող այս հատվածը տպագրված է (Երկերի ժողովածու) հ. 6, էջ 477—478), անհայտության մեջ է մնացել շարունակությունը, որ վերաբերում է արդեն Զորյանին: Արմենի գնահատման առիթով էլ Չարենցը վեճ է սկսում Զորյանի դեմ՝ հատկապես նեղսրտած Արմենի «Երևանին» վերջինիս տված բնութագրումից («ամնկական թոթովանք»): Շարունակության մեջ Չարենցը պարզապես անարդար է, նա Զորյանի գրականությունը սահմանափակում է «հայ գավառով», նրան անվանում «գավառացի», ավելին՝ ներկայացուցիչը գրական «սահմանափակության», որ նույնիսկ «կուլտուրականության պրետենզիա ունի»: Չարենցն անարդար էր Զորյանին գնահատելիս, բայց առավել անարդար է հետևություններ անելիս՝ տարակուսելով, թե ինչու «հեղափոխությունը շմաքրեց» այդ, ինչպես ինքն է ասում. «խեղճ մարդուն»՝ «և անգամ փորձում է հեղափոխությունը հարմարեցնել — իրեն... Եվ մարդիվ չեն նկատում... Այս է ահա և ծիծաղելի, և ցավալի... Ստացվում է արսուրդ, և — տըխուր արսուրդ: Իսկ երբ այդ արսուրդը դառնում է մի ամբողջ ժողովրդի իրականություն միջին մակարդակով — դա արդեն ոչ միայն տխուր է, այլև ազնուալի ու ողբալի» (ԳԱԹ, Չարենցի ֆոնդ, թիվ 144, թ. 4):

Շատերի համար «անհարմար» ու անհնազանդ Չարենցը վերը բերված

տողերում հաշտ չէ և իր հետ, նրա խոսքը նույնչափ ուղղված է և իր սեփական սկզբունքներին, նրա ժխտումն անսովոր մի բան չէր, այլ իր սովորական ինքնաժխտումը, որով սկսել էր՝ որին հավատարիմ էր, որով պիտի դիմավորեր իր վերջը: Ապացույցը նրա նույն օրագիրն է, որտեղ նույն ամսվա գրառումներում հանդիպում ենք «տարօրինակ» խոհերի: Ահա մի հատված մարտի 17-ի գրառումներից, որ վերաբերում են «երջանկահիշատակ» Վ. Վ. Ռուզանովին. «Այս վերջինս ունի մի հուշակավոր աֆորիզմ՝ «Литература—это МОИ ШТАНЫ!»... Հանճարեղ աֆորիզմ... մի աֆորիզմ, որ կարող էր հնարել Տոլստոյի ու Գոստոևսկու հայրենակիցը:— Սակայն որն է այդ հանճարեղ աֆորիզմի ներքին իմաստը:— Իհարկե, այն, որ գրականությունն իբրև ստեղծագործական ակտ, ինտիմ հանգամանք է:— Իր ֆիզիոլոգիական մերկուրյամբ այժ արքիման հանճարեղ է: Սակայն ինչ է անում Պրիշվինը սրանից... Նա իր այդ ստեղծագործական վարտիքը նախ «վաճում է» գրական «հարմարության» լողտանքով, «արդուկում» է՝ «ընդունելի» ոճերով — և ապացույց է տալիս այդպիսի (նման) ինտիմությունների սիրահարներին... Եվ Գորկին, արդեն գլուխը կորցրած դիֆիրամբ է կարդում նրան... Իսկ իմ կարծիքով, եթե սիրում ես «ինտիմությունը», որքան ավելի գերադասելի է «կեղտոտ» վարտիքը, քան արդուկածը և օսլայածը... որքան էլ ոչ էսթետիկ լինի կեղտոտ վարտիքը, նա, այնուամենայնիվ, նրանով է գերազանց, որ — բնական է (— չէ՞ որ այդ ամբողջ «մեքողի» «մեխն» ու գերազույն իմաստը — հենց ֆիզիոլոգիական ինտիմությունն է: Ուրեմն էլ ինչ Պրիշվին, եթե կա Վ. Վ. Ռուզանով» (թ. 4):

Երբ գրվում էին օրագրի այս տողերը, Չարենցը նույնչափ դեմ էր Զորյանին, որքան և Պրիշվինին, Գորկուն... իրեն: «Գիրք ճանապարհի» ժողովածուն՝ նրա մեծ կյանքի արյունոտ Մատյանը, բանաստեղծի վերջին կայանը չէր: Այդ գրքից հետո նա կանգ չէր առել, և ինչպես միշտ, իր անծանոթ արահետը սկսում էր «տարօրինակ» խոհերով: Օրագիրը դրա վկայությունն է՝ անծանոթ հորիզոններով, արդեն երևացող ափի զգացողությամբ, նոր ճամփեքի մղող անհնազանդությամբ, շհամակերպվելու վճառականությամբ, հրամարվելու համարձակությամբ, ինքնահերքման պատրաստակամությամբ:

18 III, 1934 թ. «Այս մասին հարկավոր է լավ մտածել և աշխատել ճշգրիտ կերպով գրի առնել այդ մտքերը, — մի բան, որ շատ ավելի է դժվար, քան ոտանավոր գրելը» (թ. 9):

19 III, 1934 թ. «Երեկ դու, այսօր — ես, վաղը — նա»... Բայց մի՞թե մարդկային կյանքը կարող է բավարարվել «օրացույցով»... Այդ դեպքում — ավելորդ է ոչ միայն «արվեստը», այլև գիտությունը և այն ամենը, որ կապված է մարդկային կյանքի տրագիցիայի հետ...» (Երկերի ժողովածու, հ. 6, էջ 481):

23 III, 1934 թ. «Ինչ ուզում են մեր «մարքսիստ» քննադատներն ասեն, գրողը «կոտակում» է իր «գանձը» ոչ թե գիտակցաբար, այլ միանգամայն «ենթագիտակցաբար»: Եվ այս է ահա ստեղծագործության գաղտնիքը...» (նույն տեղում, էջ 484):

13. IV, 1937 թ. «Յուրաքանչյուր գաղափար վերջերս սկսում է ճյուղավորվել իմ ուղեղում և զարգանալ «ճյուղավոր» հաջորդականությամբ: Մի ներքին անզսպելի մղում դրդում է տվյալ գաղափարը զարգացնել, իր բոլոր հնարավոր կողմերով, «ոստնային» սիստեմով — այսինքն՝ ինչպես աճում է ծառը...»

Ահավասիկ այդ շարաբաստիկ «սիստեմը», որ, ինչպես կտեսնենք, ոչ թե սիստեմ է, այլ կատարյալ անսխառնմություն — տարրերի, բնական, վայրի, մացառուտ ու աճման անկոնտրոլ (ոչ ներքին իմաստով) ընթացք...» (նույն տեղում, էջ 489):

Այնուհետև Չարենցը շարունակում է մտքի այս «անկոնտրոլ» ընթացքը և հանգում զարմանալի եզրակացություն-վախճանի. «Մարդը՝ հայելու մեջ ինքն իր դեմ = ես կին = ինքն իր դեմ...»:

«Տուր ինձ, ով ապոլոնյան արև, նծարն այս հոգևոր, որպեսզի կարողանամ ոչ միայն ցանկալ, այլև կատարել, ոչ միայն ձգտել, այլև հասնել, — ոչ լուկ ընթանալ, — այլև տալ ընթացք գիտակցական ու անհեղի...» (նույն տեղում, էջ 490):

Ահա թե որտեղ էր կանգ առել միշտ ճամփի սովոր նրա միտքը, ահա թե ինչ էր պատրաստվում պարզեցնել հրածեղտից առաջ: Որ Չարենցն իր այս խոհերը զուտ անձնական չէր համարում՝ վկայում է նույն այդ օրագիրը, որտեղ կա դիմում... ընթերցողին՝ «Այս հարցին դու պատասխանիր, ընթերցող»:
Սա բարձրաձայն խոսակցություն էր իր ընթերցողի հետ այն մասին, ինչ վիճակված չէր ավարտի հասցնել: Եվ այդ նոր ճանապարհը նա սկսեց այնպես, ինչպես 10-ական թվականներին, նաև հետո՝ «Երեքի» աղմկոտ ու հերքող տոնով, վերջին Մատյանի հանճարեղ ժխտումներով: Նրա ժամանակակիցն ու գաղափարակիցը՝ Գուրգեն Մահարին՝ հիշում է, թե ինչպես դոմեց Չարենցը մի երիտասարդ գրողի՝ «Ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունը՝ ստեղծել» (Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, 1961, էջ 184): Սա «ոչնչից սկսելու» նորօրյա պահանջը չէր, և Չարենցը, ինչպես անդեկացնում է նույն հուշագրողը, շտապում է ուղղել իրեն՝ «Կուլտուրան հերքել կլինի»:
Սա հերքում չէր հանուն հերքման, այլ նորի պարտադիր պայմանի՝ ու պահանջը՝ մշտապես նորոգվելու, նորը սրտանց արտոնելու, պահանջողականությունն ու պահպանողականներին շնորհակցելու, արդեն արածն ու տեսածը չկրկնելու, ուրիշի ճամփով չվազելու, ուրիշի հետքով չգնալու: Այսպիսին էր Չարենցը: Ահա թե ինչու իր ամեն մի նոր գիրքը նա կարծես «հայտնագործում» էր և գրքերով մտածելը համարում էր իսկական տաղանդի նշան: Ահա թե ինչու իր վերջին «մտածությունները» սկսում էր ինքն իր դեմ, իր արածի, իմացածի, իր հավատի ու սկզբունքների դեմ: Արդեն չէր բավարարում լավը, որովհետև անցյալ էր, իրականությունը թվում էր ծանոթ ու ձանձրալի, նախկին ու ծանոթ՝ ռեալիզմը՝ իր դարն ապրած, իսկ ինքը հեռու, իսկ ինքը մենակ ու օտար այդ ամենին: Իր նոր ճամփան նա սկսում էր պարզ իրապաշտությունը մերժելով, իրականի ստրուկը դարձած ռեալիզմը հերքելով, որովհետև արդեն հեռացել ու հեռանում էր դրանից, սկսում էր իրրև նոր ոճ, որ չի հարմարվելու ծանոթ ոչ մի բանի, չի հարմարվելով «հարմարությունը», չի «արդուկվելու» ոչ մի գնով, չի լինելու «ընդունելի», չի լինելու «օսւլյած»: Այս խոհերի մեջ էլ նրան երևաց Ջորջանը՝ հղկված ու նուրբ ոճի տեր իր գրչակիցը և Չարենցը կոիվ հայտարարեց նրան: Ուզում էր, որ իր «նոր էսթետիկան» լինի «ոչ էսթետիկ», բայց մնա «գերազանց» ու բնական առավելի՛ Ուզում էր անել ու հասցնել ավելին, քան ոտանավոր գրելն է, չէր բավարարվում «օրացույցով» և պատրաստվում էր տոլստոյավարի հերքել այն, ինչին նվիրվել էր՝ արվեստը: Նրան գրավում էր «ենթագիտակցականը», ոչ թե իրապաշտությունը, այլ ճյուղավորված ու բարդ գիտակցությունը, «անսխտեմ սխտեմը» և այդ ամենին հասնելու համար ընտրել էր իր միակ ուղին, կանգնել էր ինքն իր դեմ, զննում էր իրեն ու իր անցյալը: Նա նորից նույն Չարենցն էր՝ Մարդը ինքն իր դեմ...

«Եթե ինձ պաշտպանեմ»

Ամեն օր վտանգի մեջ՝ նա կարիք ուներ իսկական, անձնվեր բարեկամի, բուրրից անզգուշն էր, անհավասարակշիռը, դրանից էլ՝ գրեթե միշտ

միայնակ: Այդպիսի մի պահ էլ Ջորջանից նեղարտել է. «...նթե դու, Դեմիրճյանը վեր կենաք ինձ պաշտպանեք, իմ թշնամիները կլռեն... Դուք ինձ չեք պաշտպանում»: Բայց ճշմարտությունն այն է, որ «զգույշ բարեկամը»՝ Ջորջանը, որի հանդեպ հրեման անարդար էր այնքան, նրան մենակ չթողեց: Ահա թե ինչու խոսելով Չարենցին «բարոյական նեցուկ լինելու» մասին, Ջորջանն իրավունք ունեի ավելացնելու՝ «ինչպես արել էի ուրիշ առիթներով»:

1935 թ. մարտի 8-ին Չարենցը դիմում է Հայաստանի խորհրդային գրողների միության վարչությանը՝ մի հայտարարությամբ, որով իրեն դուրս էր դնում, ինչպես ինքն էր ասում, գրողների այդ «կորպորացիայից»: Բանաստեղծի հերթական «չարաճճիությունը» չէր սա, այլ ուներ միանգամայն իրական ու հիմնավոր դրդապատճառներ՝ կապված գրական-ստեղծագործական հանգամանքների և հատկապես իր նկատմամբ գրական ղեկավարության վերաբերմունքի հետ: Չարենցը դժգոհում է գրողների «հերթից», որով տպագրվում էին, աշխատանք ու հոնորար ստանում, հարկ վճարում... «Ես նրա համար չեմ քսանհինգ տարի ծառայել արվեստին, որպեսզի վերջում նույնիսկ գրական-սեխնիկական աշխատանքով չկարողանամ ապահովել իմ և իմ ընտանիքի կուլտուրական ապրուստի մինիմումը... Վերջացնելով, խնդրում եմ կրկին՝ շտալ դիմումիս քաղաքական իմաստ և այսօրվանից ջնջել իմ անունը գրողների ցանկից: Թերևս ես կարողանամ ավելի օգտակար լինել խորհրդային կուլտուրայի այլ ասպարեզներում և, միևնույն ժամանակ, ստիպված չլինեմ զբաղվել գործի ու հասույթի մուրացկանությամբ» (Անտիպ և Նավաբված երկեր, 1983, էջ 473):

Գրողների միության վարչությունը 1935 թ. մարտի 13-ի նիստում քրննարկեց Չարենցի հայտարարությունը՝ այն որակելով իբրև «քաղաքական փաստաթուղթ» և Չարենցին հեռացրեց գրողների միությունից: Ահա մի հատված նիստի արձանագրությունից. «Ընկ. Գ. Սիմոնյանը նախ կարդաց ընկ. Չարենցի հայտարարությունը, ապա ներածական խոսքում մեկնաբանեց այդ դիմումը ըստ էության որպես քաղաքական փաստաթուղթ, որից հետո հաջորդաբար արտահայտվեցին ընկ. Ս. Ջորջան, Գ. Դեմիրճյան, Ալազան, Ջանան, Ա. Վշտունի, Գ. Մահարի, Հ. Ջնդի, Սիրաս, Ա. Բակունց, Ն. Դաբաղյան, Եֆենդիև, Հ. Մելիքյան (ընկերների ելույթների համառոտագրությունը կրցվում է առանձին):

Բոլոր ընկերները միաբերան որակեցին Չարենցի հայտարարությունը որպես քաղաքական մի փաստաթուղթ, որն արտահայտում է դասակարգային թշնամու գաղափարախոսությունը: Ընկերները նշեցին նաև Չարենցի կտրվածությունը և ինքնամեկուսացումը սոցիալիզմի շինարարությունից» (ԳԱԹ, ՀԳՄ ֆոնդ, թիվ 9):

Վերջում ամփոփելով մտքերի փոխանակությունը, նորից՝ ելույթ է ունենում Գ. Տեր-Սիմոնյանը, նոր փաստերով ապացուցում, որ Չարենցն իրոք թույլ է տվել հակահասարակական արարք, շնորհանելով հիշեցնել նաև նրա մի շարք այլ «նմանատիպ ելույթներ»: Ապա ընդունվում է որոշում՝

«1) Չարենցի վերոհիշյալ դիմումը հանդիսանում է ըստ էության քաղաքական մի փաստաթուղթ, որն արտահայտում է մեր դասակարգային թշնամու պրովոկացիոն, զրպարտիչ դիրքը հանդեպ խորհրդային իշխանության: Չարենցն իր այդ դիմումով ժխտում է «փոքր ազգությունների» գրականության ու կուլտուրայի զարգացումը և անվանարկում է այն:

2) Վարչությունն արձանագրում է, որ այդ դիմումով Չարենցն ավելի է խտացնում իր կողմից՝ մի շարք առիթներով արտահայտած ունակցիոն նացիոնալիստական, ինչպես և հակահասարակական տեսակետները:

Իր ամենից ավելի նպաստավոր ու ապահով նյութական կենցաղային

պայմանները Չարենցը ստահող կերպով ներկայացնում է որպես աննպաստ իր ստեղծագործության համար: Վարչութիւնն արձանագրում է, որ հակառակ իր և մեր հասարակայնութեան կողմից Չարենցի համար ստեղծված նպաստավոր պայմանների՝ ուղղելու իր նացիոնալիստական դիրքավորումներն ու վերջ տալու իր հակահասարակական վարմունքներին, Չարենցն ավելի համառոտ է գնալով խորացրեց իր սխալները մինչև հակախորհրդային ելույթներ:

3) Վարչութիւնը խստիվ դատապարտում է Չարենցի ըստ էութեան հակախորհրդային, հակահասարակական վերջին հայտարարութիւնը և գտնում է անհրաժեշտ նրան հեռացնել Հայաստանի խորհրդային գրողների միութեան վարչութիւնից և միութիւնից» (նույն տեղում):

Այս որոշմանը կցված է, ինչպես արձանագրութեան մեջ է ասված, «ընկերների ելույթների համառոտագրութիւնը» (մեքենագրված տեքստը ցույց է տալիս, որ ելույթ ունեցողները ծանոթացել են դրան և ուղղումներ մտցրել): Միայն մի հարցում արձանագրութիւնը թույլ է տվել «անճշտութիւն»՝ որոշումը վերագրելով «բոլոր ընկերներին»: «Միաձայն» դատապարտողներին չի միացել Ջորյանը, ավելին՝ ինչպես ցույց է տալիս «համառոտագրութիւնը», նա համաձայն չէր որոշման հետ, այլպէս չէր առաջարկի «հետաձգել» այն: Ջորյանը ելույթ է ունեցել երկու անգամ, որի մասին ցավոք դժվար է լիարժեք պատկերացում կազմել («կցված համառոտագրութիւնը» վերաշարադրանք է), բայց առճակատումից ամեն կերպ խուսափելով՝ նա պարզ հասկացնել է տվել, որ չի կարելի Չարենցի «սխալ, անվայել» քայլն արժանացնել քաղաքական անդառնալի ու վտանգավոր որակումների: Ջորյանի արարքը և՛ պաշտպանութիւն էր, և դիվանագիտութիւն միաժամանակ: Ահա այդ երկու ելույթի «համառոտագրութիւնը». «Ընկ. Ստ. Ջորյանի առաջին ելույթը.

Ընկ. Ջորյանն իր առաջին ելույթում հարց է տալիս, արդյոք բոլոր ճանապարհներն սպառված են, որ Չարենցը հետ վերցնի իր՝ խորհրդային գրողին անվայել հայտարարութիւնը: Թերևս վարչութեան մի քանի անդամներ գնան խոսեն նրա հետ, ոչ պաշտոնապես վարչութեան կողմից, հասկացնեն Չարենցին, որ նա գիտակցի իր սխալը, հետ վերցնի իր հայտարարութիւնը, որը գուցե և գրել է մոմենտի ազդեցութեան տակ, նկատի ունենալով նրա անհավասարակշիռ բնավորութիւնը:

Ընկ. Ջորյանի երկրորդ ելույթը

Ընկ. Ջորյանն իր երկրորդ ելույթում ասաց, որ այդ դիմումը համարում է քաղաքական օբստրուկցիա: Չարենցը, որ խորհրդային գրողների մեջ լեզել է ամենից փայփայված գրողը, ամենամեծ եկամուտ ունեցողը, վայել չէր նրան եկամուտի համար այսպիսի քաղաքական ելույթ ունենալ:

Եւ գտնում եմ, որ կուսխմբակի տված գնահատականն այդ հայտարարութեանը միանգամայն ճիշտ է և տեղին, այնուհանդերձ, ես գտնում եմ, որ ավելորդ չէր լինի մի վերջին փորձ ևս նրան համոզելու իր սխալ քայլի մեջ: Այդ պատճառով ես առաջարկում եմ մի քանի օրով հետաձգել որոշումը, նորից խոսելու նրա հետ, որ իրեն այսպիսով դուրս է դնում ոչ միայն խորհրդային գրողների միութիւնից, այլ կարծես նաև խորհրդային հասարակութիւնից:

Եվ եթե այդ բոլորն անկարելի է և նրան համոզելու բոլոր փորձերը դատապարտված են անհաջողութեան, ինչպես ընկերներն են ասում, այն ժամանակ համաձայնվելով որոշման հետ, ես կառաջարկեի մի կեսը ևս մտցնել բանաձևի մեջ, հենց թեկուզ դաստիարակչական տեսակետից՝ այն իմաստով,

որ եթե նա գիտակցի իր սխալը և որպես քաղաքացի կհայտնաբերի իր լավ վարքը, ապա նրա վերադարձը գորղների միություն արգելված չի լինի»:

Զորյանի առաջարկը նիստում պաշտպանեց Դեմիրճյանը, բայց վարչության անդամների դիրքորոշումը անզիջում ու պարտադրող էր: Այսպես, Զանանն իր առաջին ելույթում խնդրում էր պարզաբանումներ անել նախքան վճռին անցնելը, ծանոթացնել մանրամասներին, իսկ երկրորդ ելույթում՝ անվերապահորեն ընդունեց «կոմֆրակցիայի հանած վճիռը»: Վշտունին դատավորի պես պահանջում էր փոխել «դաստիարակչական ձևերը դեպի Զարենցը և դեպի առհասարակ սխալ գործող ընկերները», պահանջում էր, որ այդ «ընկերները» դատապարտելիս տատանվողներ չլինեն, Աիրասը բանաստեղծի այդ քայլը կապում էր նրա ազգայնական տենդենցների և հակահասարակական գործունեության հետ, քննադատում էր Զորյանին, որ փորձել էր հասկանալ մեղադրեց առաջ: Այդ նիստում անճանաչելի էին անգամ Մահարին ու Բակունցը: Մահարին իր խոսքը վերջացրեց բավական կտրուկ. «Մեզ ոչինչ չի մնում, եթե ոչ ընդունել կուսիմբակի բանաձևը և հույս ունենալ, որ այս ակտը կունենա նրա համար զգաստացուցիչ նշանակություն: Այսքան»:

Իսկ Բակունցը կոմֆրակցիայի վճիռը պաշտպանեց այսպես. «Մենք պետք է խիստ պատժենք հենց թեկուզ նրա համար, որ նա մեծագույն բանաստեղծն է հեղափոխության և նրա բազմաթիվ երկերը հավիտյան կմնան հայ խորհրդային գրականության ոսկե գանձարանում: Որքան էլ դժվար լինի, այնուամենայնիվ, պետք է սահմանել խստազույն պատիժ»:

«Զորյանի սխալներ»

Արքեն կենդանության օրոք բանաստեղծը նման էր լեզենդի՝ նրան կարելի էր պատժել, նրա վաստակը կարելի էր ուրանալ, նրան կարելի էր խրատել... Բայց նա էլի անհաղթելի էր: Մնում էր մի բան՝ բարի անունը վարկաբեկել քսությամբ ու բամբասանքով: Իր դուրազզաց հոգին չհամակերպվեց շրջապատի թույնին, իսկ շուրջը վխտացողները՝ «վատ, նախանձ մարդիկ», իսկ շուրջը շշուկներ ու փսփոսոց՝ «գինեմոլ», «հարբեցող», «սկանդալիստ» պոետի մասին: Վիվանը հիշում է այդ զազրելի փորձերը, որոնց ականատես է եղել անձամբ («լսում էի աջ ու ձախ»): Ը. Կոջոյանը դրանով է բացատրում բանաստեղծի շիտակ հոգու մոլորութունները, իսկ Տ. Հախումյանը հիշում է բանաստեղծին՝ շրջապատված «վրեժխնդիր բամբասանքի մոնբլաններով...»:

Լինում են ժամանակներ, երբ լույսին լույս ասելը հավասարվում է սրխորանքի, և արարքի գինը բազմապատկվում է; երբ հիշում ենք այդ քայլը անողին՝ Զորյանին նույն այդ 30-ական թվականներին: «Ուղեկից» էր, բայց կողմնակի դիտող երբեք չեղավ, չէր հարում ոչ մի խմբակի, ոչ մի խմբակցության ու միշտ զգուշանում էր խմբակայնությունից: Նա Զարենցին պաշտպանում էր այն պահին, երբ ինքը դրա կարիքն ուներ: Նա խոսեց Հայաստանի գրողների առաջին համագումարում խորհրդային քննադատության վայրենությունների մասին, քանի որ՝ առաջիններից մեկն էր ընկել դրա կրակի տակ: Զարենցին խորհուրդ էր տալիս չմտնել անպտուղ ու վտանգավոր բանավեճերի մեջ, բայց դրանից խուսափել ինքը չկարողացավ:

«Գրական դիրքերում» ամսագիրը 1931 թ. 2—3 միացյալ համարում տպագրել էր Ընձակ Վահանյանի «Իրական կյանքից հետ մնալու մի փայլուն նմուշ» հոդվածը, որտեղ գրախոսվում էր Զորյանի «Վարդաձորի կոմունը» վեպակը: Թե՛ քննադատի և թե՛ ժամանակի քննադատության համար շատ բնորոշ էր այն ելակետը, որից սկսում էր Ը. Վահանյանը. «Մենք առանձնապես

չենք զբաղվի գրվածքի գեղարվեստական մասի վերլուծությամբ» (էջ 67): Եվ առանց ժամանակ վատնելու նման «անկարեոր» բաների վրա քննադատը միանգամից անցնում է... կնոջ ու տղամարդու հավասարության խնդրին և մեղադրում հեղինակին ահա թե ինչում. «Հիրավի ինչ է նշանակում հաստատել, որքան էլ այն «միջանկյալ» ասված լինի, թե «կինը տղամարդու բան անելով՝ տղամարդու տեսք է ստացել»: Դա նշանակում է ամենից առաջ այն, որ գյուղատնտեսության մեջ տղամարդու գործը տարբեր է, կնոջը՝ տարբեր, հետևապես նրանց միջև հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել...» (68):

Զորյանն այդ հոդվածին պատասխանեց ամսագրի հաջորդ՝ 4—5 նույնպես միացյալ համարում «Գրախոսություն, թե՞ զրախոսություն» խմբագրությանն ուղղված նամակով, որին միանգամից արձագանքեցին և՛ քննադատը, և՛ խմբագրությունը միաժամանակ: Զորյանը դժգոհում էր այն անվայել ոճից, որ բանեցրել էր Վահանյանը, բողոքում էր հատկապես «կոմունարկայի» հորինված համեմատության դեմ, որով քննադատն սկսում էր քաղաքական մեղադրանքների շարանը: Ահա Վահանյանի քննադատության այդ հատվածը. «Հեղինակը նկարագրում է Բենտյին, գլխին ականջակալներով մի գլխարկ (ամենայն հավանականությամբ կոմունարկա), որը գյուղացիները տեսնելուն պես նմանեցրին շան «լուշտակ» ականջների... Այստեղ, ընկ. Զորյանը, հակառակ իր ցանկության, օբյեկտիվորեն արտահայտում է բանվոր դասակարգի արշավից գազազած կուլակների ու նրանց վարձկանների տրամադրություններն ու բամբասանքները» (թիվ 2—3, էջ 68):

Զորյանի նամակի դեմ ուղղված պատասխանում Վահանյանն արդեն ավելորդ էր համարում որևէ հիմնավորում կամ փաստ՝ այդպես էլ փորձելով մերկացնել քաղաքական «փորձառու» հակառակորդին. «Կասկած չկա, լավ սրամիտ մարդ է Զորյանը: Նրանից ինչ ուզում ես պահանջիր, անգամ նրա հերոսների մետրիկականը, բայց միայն մի պահանջիր հերոսների փաղափակե դեմքը, համոզմունքների ուղի և պարզ, աներկղիմի պատկերում: Զէ՛ որ տալ այդ բոլորը՝ նշանակում է կարտերը բացել սեղանի վրա, որը շափազանց անձեռնտու և վտանգավոր բան է թուղթ խաղացողի համար: Այդ բանը Զորյանը լավ է հասկանում, նա դրանում բավական փորձ ունի» (թիվ 4—5, էջ 63):

Ամփոփելով այս տարօրինակ բանակոխիչ՝ խմբագրությունը տեղեկացնում է, որ տպագրել է Վահանյանի գրախոսականը առանց որևէ դիտողության կամ միջամտության, որովհետև համակարծիք է եղել դրան: Եվ իսկապես, խմբագրության ամփոփագրում ուղղակի կրկնվում են Վահանյանի մտքերը: Եթե գրախոսը հանդես էր գալիս իբրև կոմունիստների առաջատար դերի ջատագով՝ «Ակամայից ընթերցողը հանգում է նրան, որ Զորյանը չի տեսնում կոմունիստների, կոմերիտականների գյուղում կատարած հսկայական հեղափոխիչ աշխատանքները, որ նա օբյեկտիվորեն թերագնահատում է (ավելի շուտ բացասում) նրանց ավանգարդ դերը գյուղի ինչպես կուլտուրական, այնպես և տնտեսական հեղաշրջման գործում» (թիվ 2—3, էջ 70), ապա խմբագրությունը նույն այդ միտքն արտահայտում էր հետևյալ «խմբագրումով». «Իր նամակում ընկ. Զորյանը գրում է. «Կոմունիստների աշխատանքների մասին խոսք եղել է այնքան, որքան իմ նյութը վերցրել է»: Ընկ. Զորյանի վիպակում կոմունիստների աշխատանքն այնքան է «նյութ վերցրել», որ այդ կարելի է հավասարեցնել զերոյի... Ինչպե՞ս կարելի է վերարտադրել իսկական արտելի գործունեություն, առանց կապակցելու այդ գյուղի խորհրդային հասարակայնության անմիջական ղեկավար՝ կոմունիստների և կոմսոմոլիցիների ակտիվ մասնակցության և ղեկավարության:

Քերականահատելով այդ ուժերը, ընկ. Զորյանը հենց ինքն է իր վիպակին վատ վկայական տալիս» (Թիվ 4—5, էջ 65—66):

... Ահա այսպես, ինչպես Չարենցն էր ասում՝ «պագրոմային քննադատության» պայմաններում՝ անվատահուժյան ու կասկածի մեջ, նրանք տեսնվում ու զրուցում էին, և լավ ծանոթ լինելով քննադատական այդ ոճին՝ Զորյանը փորձում էր դրանից հեռու պահել իր հանձարեղ ընկերոջը: Զորյանի հուշերի այդ հատվածներում ամեն ինչ չէ, որ ընդունելի է, երբեմն, թեկուզ երևակայորեն, Զորյանը հնարավոր էր համարում այլ բան, ուզում էր տեսնել ուրիշ Չարենցի ու կատարվածի մեջ էլ՝ նաև իր՝ անզգույշ Չարենցի «մեղքը»:

Եվ, այնուամենայնիվ, էականն, անշուշտ, դա չէր, և այս պատմության մեջ էլ մեզ հետաքրքրում է այն, ինչ եղել ու դեռ լինելու է՝ մեզ հետ, եթե ուշքի չգանք: Գրական վեճերի, սառնուժյան, անգամ ակնհայտ վիրավորանքի մեջ Զորյանը մնաց բարձր, կարողացավ հասկանալ ու ներել այն, ինչ իր շրջապատում չէին ներում: Չարենցը վիճում էր նրա հետ, իսկ ինքը պատմում է. «Արդարամտությունը պահանջում է ասելու, որ իմ նկատմամբ նա կոռեկտության սահմանից դուրս չեկավ երբեք, որքան էլ մենք վիճեինք կամ տարածայն լինեինք այս կամ այն գրքի կամ խնդրի շուրջը...»: Նրան պատմում էին տարօրինակ դեպքեր՝ չհեղինակ, շարախոսեց, շարացավ երբեք, զուսպ ու մեղմ էր՝ միայն իրեն հատուկ ձևով: Վահան Հովսեփյանը հիշում է Չարենցի անսովոր հակոճանքներից մեկը, որ պատմել է Զորյանին. «Երբ ես նույն երեկոյան այս դեպքը պատմեցի Ստեփան Զորյանին, նա ասաց, որ «նշանավոր պրոզաների մոտ այդպիսի տարօրինակություններ լինում են» (Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, էջ 189): Չարենցը նրա մասին գրեց. «Զորյանը ապօրիտիկ է, ինչպես միշտ» (Երկերի ժողովածու, հ. 6, էջ 113), Զորյանը նման դեպքերում անտեղի բանակոծել էր սարքում: Եվ մի զարմանալի զուգարհպությունաբ Զորյանին էլ վիճակվեց հավանաբար վերջին խոսակցություններից մեկը անձամբ Ստալինի հետ՝ Չարենցի մասին, որտեղ իր զուսպ պահվածքով փորձում էր շեղել «հոգատար ղեկավարի» ուշադրությունը...

Զորյանի՝ այն տարիներին սովորական թվացող պահվածքն իսկապես նման է սխրանքի: Այդպիսին էր նաև հետո՝ անքեն ու խոհեմ, իսկական քաղաքացի: «Այն տարիներին, երբ ես ճանաչել եմ նրան, — պատմում է հուշագիրը, — շատ փաստեր եմ իմացել ու ինքս տեսել, թե Զորյանն ինչ ազնիվ ու կայուն քաղաքացի է եղել... Գրական արխիվից հայտնի է այն եղելությունը, երբ Չարենցի հանդեպ որոշ գրողների միտումնավոր վերաբերմունքի օրերին միայն Զորյանն է պաշտպանում նրան: Անհատի պաշտամունքի տարիներին, մի անգամ անձամբ ինձ դժգոհեց որոշ խմբագիրներից, որոնք հավելումներ էին անում նրա գրավոր խոսքերից ու ելույթներին: Միշտ սրդողած, հազիվ զսպած, անհանգիստ շարժումներ էր անում, երբ ամբիոնից որևէ մեկն ըսկրում էր անձնական հաշիվներից խոսել, գոհակաբանել կամ ամբաստանել: Երբեմն թողնում, դուրս էր գալիս այդպիսի աղմկոտ խորհրդակցություններից: Հետո հանդիպելիս, դառնացած գանգատվում էր, անվերջ հիշեցնելով, որ գրողին, մտավորականին սազական չեն այս հոռի բարբերք» (Հ. Հովհաննիսյան, Զորյանի սխրանքը. — հեղինակի «Մշտագալար ծառը» գրքում, էջ 145—146):

Մեր գրական կյանքում Զորյանն իսկապես երևելի երևույթ էր՝ համեմատելի թերևս միայն Թումանյանի հետ: «Երեքի» գրական մրրիկները, որ շատերին անհանդուժելի թվացին, Թումանյանն ընդունեց մեծին վայել խաղաղությամբ. «Ասում են, թե Օլիմպոսում որդիներն ուտում են իրենց հայրերին, դրա իմաստն էն է, որ գրականության մեջ նոր եկողն աշխատում է նոռն ստեղծել ու հներին չի հավանում: Դա բնական բան է: Մենք էլ մեր ջահե:

ժամանակ Շահազիզին ու Ռափայել Պատկանյանին չէինք հավանում, ասում էինք հին են: Մենք ավելի լավն ստեղծենք: Բայց դուք մի քիչ սահմանն անցել եք: Համ էլ, դե՛ գործով պետք ա հասնեք և ոչ միայն դեկլարացիայով...» (Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, 1961, էջ 125): Այլապես Թումանյան չէր լինի: Այլապես կնամավեր՝ նրանց՝ անձնական հաշիվներից դրդված բայց ազգի անունից հոխորտացողներին, իրենց մի մատ օգուտը ամենից վեր դասող, իրենց մի մատ արժեքը պարտադրող «վաստակավոր համբակներին»: Իր ապրած կյանքով Թումանյանն ապացուցեց, որ գրականությունը բարոյականություն է նախ և առաջ ու չի մանրանում, չի դառնում մանր դրամ, դրոնեդուռ չի ընկնում, հայհոյանքով չի պղծվում՝ գրականությունը սեր է ու այդպես էլ կմնա:

Եվ եթե գրողի կյանքն էլ՝ մի ստեղծագործություն է, ապա դրա հաշորդ էլը գրելու էր Ջորջանը՝ Թումանյանի աշակերտն ու հետևորդը: Գիտեք, որ Չարենցն ամենից անզգույշ է, որ նման չէ «ականավոր հայերին», որ զգույշ ու խեղճ են դրսում ու անմեղ հարցումին անգամ տալիս են պատասխան՝ խուսափողական, անորոշ, կասկածելի... Տեսել էր ու գիտեք ու կարևորում էր «անզգուշությունը», «տարօրինակությունը», գիտեք, որ կյանքը նույնը մնալ չի կարող՝ առաջ շարժող է պետք, իր դարն ապրածից ճիշտը հրաժարվելն է՝ հրաժարվող է պետք, թանգարանի հինը նոր չի դառնում՝ «հները հին են ասող է պետք: Գիտեք, որ առանց Չարենցի՝ նման գործիչների հասարակությունը կխարխլվի, ազգը կամլանա, ցեղի երակը կբարակի, նրանց հետ դրժվար է, բայց առանց նրանց՝ կանոնի չհարմարվող, տրորված ճամփեքի անսովոր, մի քիչ ծուռ, մի քիչ խենթ հայերի՝ արյունը ջուր կկտրի: Եվ եթե անցյալում ամեն ինչ չէ, որ մրուրով է պատած, նրանց շնորհիվ է, որ կան ու կլինեն, որ ուղղեն անուղղելին ու միշտ խաչվեն՝ քանի դեռ շարախոսելը սովորություն է, վարկարեկելը սովորություն է, բամբասելը սովորություն է: Ջորջանը սա գիտեք ու չէր հարմարվում, համախոհ կարող էր չլինել: Բայց համակիր դառնալ կարողացավ՝ այդպիսին էր: Այդպես են նրան հիշում ժամանակակիցները, այդպես էլ կմնա մեր հիշողության մեջ:

А. Г. АПИНЯН—Егише Чаренц и Стефан Зорьян.—В истории новейшей армянской литературы имена Чаренца и Зорьяна редко ставились рядом. Это объясняется не только различием их творческого темперамента, стиля, но и резкой противоречивостью их взаимоотношений, раскрывающихся в статьях, воспоминаниях, архивных материалах. Перед читателем рисуется картина сложных столкновений и одновременно духовной близости этих двух ярких личностей.